ՀՏԴ 891.981-93 Մկրտումյան
Դ 84 Հ
Մ 804

Մկրտումյան Կարինե
Մ 804 Խնդիրներ տատիկիս սնդուկից: Միջին տարիքի դպրոցականների համար / Կարինե Մկրտումյան.- Եր.: Հեղինակային հրատարակություն, 2010 թ.-62 էջ:

Խնդրագրքում զետեղված են տարբեր բարդության խնդիր-բանաստեղծություններ, որոնք կզարգացնեն դպրոցականների գեղարվեստական ճաշակը, մաթեմատիկական, տրամաբանական, վերլուծական ունակությունները, դատողությունը:

ՀՏԴ 891.981-93 Մկրտումյան
ԳՄԴ 84 Հ

Երկրորդ՝ վերանայված հրատարակություն:

© Կ.Մկրտումյան, 2010 թ.
© Կ.Մկրտումյան, 2013 թ.

ISBN 978-9939-53-575-3

Կ. Ս. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

# ԽՆԴԻՐՆԵՐ ՏԱՏԻԿԻՍ ՍՆԴՈՒԿԻՑ



ԵՐԵՎԱՆ-2013
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ



ԱՔԼՈՐԻ ՎԻՇՏԸ............5



ԼԱՅԿԱՆ ՄԿՆԵՐԸ........9



ՀԱՐՍԱՆՔԱՏՈՒՆ........13



ԼԱԼԿԱՆ ՄԱՐԻՆ.........16



ԵՂԲԱՅՐՆԵՐԸ.............18



ԳԱՐԵՀԱՑ...................21



ՏԱՏՍ..........................25

ԿՈՆՖԵՏՆԵՐԸ...........27



ՈՐՍՈՐԴՆԵՐԸ...........29


ՀԱՄՈՅԻ ԿՏԱԿԸ.........35


ՄԽՈ ՔԵՌԻՍ.............39

ՆՎԵՐՆԵՐԸ...............43



ԺԱՄԱՑՈՒՅՑԸ...........46


ԽԱՇԸ.......................52


ՀՆԱՐԱՄԻՏ ՀԱՅՐՍ.....55

# ԱՔԼՈՐԻ ՎԻՃՏԸ

Ծեկ աքլորը թխսկան հավի
Ճուտիկների խաղով տարվեց,
Փափկափետուր փոքրիկների
Դեղնակտուց տեսքով գերվեց:
Մտածեց, որ ճիշտ բան կանի,
Եթե ինքն էլ ճտեր հանի,



Երփնափետուր խորոզներով
Հավաբույնը իր զարդարի:
Երկար պանջվեց ու չարչարվեց,
Մինչև երկու հավկիթ ածեց,
Հավանոցի եպնամաաում
Հարմարավետ անկյուն բացեց,
Առավոտից մինչ իրիկուն
Վրան նստած սիրով թխսեց,
Բայց կերածը շուտով մարսեց:
Երբ վեր կացավ, որ ջուր խմի,
Մի քանի կում բերանն առնի,
Թարմանալով կրկին նստի,
Տեղում կանգնած խելքը մաղվեց,
Սովից ճռճվեց և օրորվեց,
Սակայն, ավա՜ղ, էլ ուժ չուներ,



Թառին զարկվեց ու սայթաքեց,

Ոտքը դիպավ ածած ձվին,

Սա գլորվեց անմիջապես՝

Հարվածելով իր կողքինին:

Հավկիթները աչքի առջև

Ճրխկոցով կպան իրար...

Արտաքնապես ոչինչ չեղավ,

Եվ ոչ մեկն էլ չկոտրվեց,
Մինչդեռ վախից մայր-աքլորի
Սիրտը վիշտ ու ցավով պատվեց:
Դո՞ւ ինչ կասես, հեչ հույս չկա՞,
Իսկ միգուցե ճուտ դուրս կգա՞...
Ի՛մ բարեկամ, կատակ-խնդրում
Անվնաս ու անշառ սուտ կա,
Եթե գտնես, կապացուցես,
Որ գլխումդ դույզն-ինչ խելք կա,
Թե չգտնես, ինձ հավատա',
Խելքի թիքա անգամ չկա:



# ԼԱՑԿԱՆ ՄԿՆԵՐԸ

Թուխսը լացի ձայն լսեց,
Տեղից ելավ, պպզվեց,
Սեղանատան անկյունում
Կրծողներին նկատեց:
-Ի՞նչ է եղել, մկնիկնե՛ր,
Ի՞նչ եք լալիս, փոքրիկնե՛ր:



Թխսկան հավի հարցումից
Լացկանները լռեցին,
Անգութ կապվից նեղսրտած՝
Իրենց դարդը պատմեցին:
Թուխսը լսեց մկներին,
Հիշեց անմեղ ճտերին,
Որոնց փիսոն գողացել,
Խեղդել ու փորն էր ածել:
-Ծվծվիկնե՛ր, մի՛ լացեք,
Դուք հարյուրն եք, իսկ նա՝ մեկ,
Բռնեք պոչից մռռանի,
Կախեք մեխից մառանի,
Թողեք այնքան մլավի,
Մինչև մեղքերն իր քավի:
-Մենք հարյուր չենք, որ հաղթենք:



-Իսկ որքա՜ն եք, դե ասե'ք,

Թե պակաս եք, լրացնենք:

-Մեր այժմյան քանակին

Մի այդքան էլ գումարիր,

Ստացածդ արդյունքի

Ուղիղ կեսն էլ հավելիր,

Եթե դու էլ, մա'յր հավիկ,

Մեզ հետ ելնես թեժ կռվի,
Այժմ հարյուր կլինենք,
Հախից կգանք չալ կատվի:
Ճուտիկներին երբ հիշեց,
Մայր հավիկը սրտնեղեց,
Լալկաններին խոստացավ,
Որ հին ոխը կհանի,
Մլավանին կախ կանի:
Քանի՞ մուկ կար, իմացե'ք,
Գլուխկոտրուկն այս լուծե'ք,
Թե կգտնեք, պարծեցեք:



# ՀԱՐՍԱՆՔԱՏՈՒՆ

Գյուղում մի մեծ ու սպասված
Հարսանիք էր նախատեսվում,
Ուստա Ավոն առաջնեկին`
Մեծ որդուն էր ամուսնացնում:
Մարդ ու կնիկ մանրակրկիտ
Հաշվել էին վարպետորեն`
Քանի սեղան պիտի բացեն,
Որ կարենան եկողներին
Հեշտ ու հանգիստ տեղավորեն,
Մինչ լուսաբաց ուտեն-խմեն,
Ուրախանան, լավ քեֆ անեն:
Ավոն կանչեց ամբողջ ցեղին`
Զույգ քույրերին, եղբայրներին,
Քեռիներին, զարմիկներին,
Նրա կինն էլ ինքն իր հերթին

Հրավիրեց ազգուտակին:
Տանն ուներին դեռ պապական,
Շատից-քչից կիրառական,
Կաղնեփայտից հսկայական
Ընդամենը յոթ հատ սեղան:
Մի թուղթ վերցրին,
Ողջ հյուրերին գրառեցին,

Կանչվածների ամբողջ թիվը
Յոթը մասի բաժանեցին,
Բայց ցուցակից, ցավոք սրտի,
Երկու հոգի դուրս մնացին:
Նորից փոքր-ինչ մտորեցին,
Երկար ու ձիգ հաշվարկեցին,
Մեկ սեղանը դուրս հանելով՝
Հրավիրյալ անձանց թիվը
Վեցը մասի բաժանեցին,
Յուրաքանչյուր սեղանի մոտ
Ճիշտ նույն թվով մարդ թողեցին:
Դուք հասկացա՞ք՝ քանի հոգու
Հարսանիքին տուն կանչեցին
Եվ ամեն մի սեղանի շուրջ
Որքան հյուրի տեղ տվեցին:



# ԼԱԼԿԱ՛Ն ՄԱՐԻՆ

Կանաչապատ, գողտրիկ այգում
Կար մի քանի նոր ճոճանակ,
Նրանց շուրջը խաղ էր անում
Ճպիկների հսկա բանակ:
Մանուկներից սակայն շուտով
Փոքրիկ թափոր առանձնացավ
Ու մեկմեկու հրմշտելով՝



Ճոճանակին վրա պրծավ:

Երբ ամենքը նստած էին,

Պստիկ Մարին այնտեղ վազեց,

Բայց քանի որ էլ տեղ չկար,

Լալկանիկը աղաղակեց:

Ծնողներին չհաջողվեց

Կամակորի ձայնը կտրել,

Դե նրանք էլ որոշեցին

Աղջնակին տեղավորել,

Նստածներին շուտ զույգեցին,

Մեկ նստատեղ ազատեցին:

Ի՛մ գիտունիկ, ապա պարզիր՝

Ճոճանակից քանի հատ կար,

Մինչ լացկանի միանալը

Դրանց վրա որքան մարդ կար:



# ԵՂԲԱՅՐՆԵՐԸ

Ես եղբորս խնդրանքով
Մի ազատ օր ճարեցի
Եվ կլորիկ գումարով
Տոնավաճառ գնացի:
Ինչ որ պետք էր, ճարեցինք,
Ամեն մանրուք գնեցինք,
Երբ որ փողս պակասեց,
Մի լավ շապիկ հանդիպեց:
Գրպանումս ինչ որ կար,
Արագորեն համրեցի,
Առանց երկար խորհելու՝
Ինձնից մեծին ասացի.
-Երկու հազար թե ինձ տաս,
Քեզնից երկու անգամ շատ
Մորս դրամ կունենամ,



Երկու շապիկ ես կառնեմ
Ու փոխեփոխ կհագնեմ:
-Չէ՛, սիրելի՛ս, չի լինի,
Կարծում եմ՝ ճիշտ կլինի,
Եթե այդքան դո՛ւ ինձ տաս.
Այդ ժամանակ երկուսով
Նույնչափ գումար կունենանք,

Առաջարկված հագուստից
Ամեն մեկս մեզ համար
Ձեռք կբերենք, կգնանք:
Իսկ մնացած դրամը
Իրար վրա թե դնենք,
Մի երրորդն էլ առնելով`
Մեր հոր համար կպահենք:
Իմ եսասեր արարքից
Ամոթահար մնացի,
Մեծ եղբայրս ոնց ասաց,
Նման ձևով վարվեցի:
Այս զրույցը լսելով`
Կարո՞ղ ես դու գուշակել`
Գումարներս որքան էր,
Եվ շապիկը ինչ արժեր:



# ԳԱՐԵՀԱՑ

Ես գարեհաց ուզեցի
Եվ պապիկիս խնդրեցի՝
Ցանկությունս չմերժի,
Հացի խմոր նա հունցի:
Տապս խուքս չանպեսեց,
Գարին սիրով ինձ պվեց,



Որ ամբարից փուն փանեմ,
Այլուր սարքեմ ու թողնեմ:
Լիքը թասը գրկեցի,
Հանկարծ ծվոց լսեցի,
Արագ մյրա հացապուն
Ու ի՜նչ պեսնեմ, մեր կապուն
Ճանկել է գորշ մկնիկին,
Դեմ է փվել դնչիկին:
Ամանը ցած դրեցի,
Խեղճ փոքրիկին փրկեցի,
Բայց անապրված ճապիկը
Հափիկները երբ պեսավ,
Իսկույն թասի մեջ մրավ,
Ուրելիքին պեր դառավ:
Պարահածից զարմացած`




Քար կտրեցի շփոթված.

«Հիմա ինչպե՞ս եւ վարվեմ,

Գարին թողնե՞մ, թե՞ փանեմ,

Իսկ որ մկնիկը մնա,

Փիսոն անխոս կուլ կտա»:

Բարդ խնդիր էր ինձ համար,

Լուծում էր պետք

Խիստ հարմար,

Մտածեցի քիչ երկար,

Վերջը գտա ճար-հնար։

Երեքին էլ վեր առա,

Մեկիկ-մեկիկ տուն տարա։

Դո՛ւ ինչ ձևով կվարվես,

Ում ինչի՞ հետ կթողնես,

Որ ոչ մեկը չտուժի,

Ոչ էլ՝ գարուց պակասի։



# ՏԱՏՍ

Տատս թեև անգրագետ էր,
Բայց հաշիվը իր լավ գիտեր,
Նա ճագար ու հավ էր պահում,
Ճշգրիտ թիվը մտապահում:
Առավոտ վաղ` արշալույսից,
Դուրս էր թողնում նրանց բնից,



Իրիկունը շուտ հավաքում,
Ներս ածելով դուռն էր փակում:
Մեկիկ-մեկիկ գումարում էր,
Երեսունհինգ հատ համրում էր,
Բույնն էր կողպում հորանջելով,
Խոշոր ձվեր պահանջելով:
Կարո՞ղ ես դու հիմա պարզել,
Թե քանի հավ ու ճագար էր
Հավանոցում փափս պահում:
Հուշեմ միայն, որ իմանաս,
Այդ բոլորը նոր միասին
Ո՛չ ավել կամ ո՛չ էլ պակաս
Իննսունչորս ոտք ունեին:



# ԿՈՆՖԵՏՆԵՐԸ

Թոռնիկներին կարոտել,
Տատիկը հյուր էր եկել,
Միրունապես բալեքին
Անուշեղեն էր բերել:
Երբ ճաշելը վերջացրին,
Քաղցրավենիքը առավ,



Դրանց թիվը հաշվելով՝
Չորս հավասար մաս արավ:
Տասնվեց հայ սալիկը
Երեխեքին բաժանեց,
Յուրաքանչյուր փոքրիկին
Չորս մեծ կոնֆետ նվիրեց:
Ամեն մեկն իր բաժինը
Ձեռքը առավ ու գնաց,
Այնինչ վերջում պուփի մեջ
Չորս կոնֆետ էլ դեռ մնաց:
Ի՞նչ ես կարծում, բարեկա՛մ,
Ինչ՞պ էր բաշխել պապիկը,
Կամ մնա՞ց չորս հապիկը,
Թե կարող ես, ինքնուրույն
Պարզի՛ր հարցիս գաղտնիքը:

# ՈՐՍՈՐԴՆԵՐԸ

Երեք եղբայր թռչնորս արին,
Չհասկացան՝ ոնց մութն ընկավ,
Մեկն ուշադիր զննեց չորս դին,
Հեռվում փոքրիկ հյուղակ տեսավ:
Որսը հապճեպ հավաքեցին,
Մոտ գնացին խուլ տնակին,



Տանտիրոջից պետ խնդրեցին,
Որ գիշերեն հարկի տակին:
Իրենց բռնած լորիկներից
Փոքր-ինչ տվին ալևորին,
Որ հաց սարքի, սեղան գցի,
Հյուրընկալի իրենց կարգին:
Տանջահար ու հոգնած էին,
Խարի վրա մեկնվեցին,
Քաղցր նիրհը շուտով հաղթեց,
Հենց հատակին մրափեցին:
Անպառապահ ժիր ձերունին
Եղբայրներին իրոք խղճաց,
Սոված-ծարավ ննջել էին՝
Իրար կողքի գետնին փռված:
Որսամիսը փեսրահանեց,



Պավամանով փուռը դրեց,
Ճոճաթոռի մեջ խրվելով՝
Արջի քնով մեկեն պարվեց:
Երբ գիշերը պանջող սովից
Տղաներից մեկն արթնացավ,
Խաշած հավքի անուշ բույրից
Համեղ լորը մրքովն անցավ:

Կերակուրը զգույշ բերեց,
Եղբայրաբար բաժին արեց,
Ճնչակտուր փորը լցրեց,
Թիկն տալով խռմփացրեց:
Կեսգիշերին ճաշի հոտը
Առավ ևս մի քնկոտը,
Նախորդի պես փուռը բանաց,
Ուտելիքը հանեց ձեռաց,
Լորիկներին փայ-փայ արավ,
Հասանելիքն արագ կերավ,
Ճաշամանը տեղը խցկեց,
Թախտին պառկեց ու շնթռկեց:
Գիշերային ձայն-ժխորը
Ոտքի հանեց մեծ եղբորը,
Սովահարը հիշեց լորը,
Քաղցից իսկույն գոռաց փորը:




*Նա էլ ճաշը անձայն հանեց,*
*Փութկոտ երեք պեղ բաժանեց,*
*Մասնաբաժինն անուշ արավ,*
*Պիսապ թողած քնին դառավ:*
*Առավոտ վաղ որ արթնացան,*
*Որսորդները սովածացան,*
*Հյուրընկալը սեղան բացեց,*

Վաղուց պատրաստ թռչունները
Նախաճաշի սուփրին դրեց,
Ինքն էլ նստեց ու ամբողջը
Չորս հավասար տեղ բաժանեց:
Որսկանները խիստ զարմացան,
Երբ սեղանին ութ լոր տեսան,
Չորսով կերան այդ բոլորը,
Բայց նյութ չընկավ նրանց փորը:
Ի՞նչ հաշիվ էր գիշերն արվել,
Քանի՞ հավք էր փուռը դրվել,
Ով քանի՞ն էր մենակ կերել,
Փորձիր ինքդ ի մի բերել:



# ՀԱՄՈՅԻ ԿՏԱԿԸ

Համոն լավ էր վաստակում,
Բայց ոչինչ չէր կուտակում,
Գոհանում էր եղածով,
Քեֆ էլ կաներ չեղածով:
Կերավ, խմեց, կատակեց,
Ամեն հաճույք ճաշակեց,
Իր աշխատած փողերից
Լոկ գրոշներ կտակեց:
Մահվան ժամը որ եկավ,
Հումորն էլի միտն ընկավ,
Ունեցվածքը նվիրեց,
Զավակներին դիմելով`
Լրջմիտ տոնով պատվիրեց.
-Ինձնից հետո առանձին




*Ամուսնանար արկղիկին,*
*Որքան դրամ կգտնեք,*
*Տույնքան վրան հավելեք,*
*Սպասվածից նոր միայն*
*Երկու հազար կհանեք:*
*Վերջում ինչ որ կմնա,*
*Ջուրը գցեք, թող գնա...*




*Ավագ որդին ճիշտ վարվեց,*
*Ծեր հոր կամքը կատարեց,*
*Միջնակն էլ նույն բանն արեց,*
*Հետո փոքրին հորդորեց՝*
*Կամք-պատգամը չխախտի,*
*Ինչ ասվել է, այն անի:*
*Իսկ երբ կրտսեր զավակը*

Առավ փողի իր չափը,
Տուփը լրիվ դատարկվեց:
Տղաներն էլ դա վերցրին,
Վրան «Կտակ» գրեցին
Եվ իրենց հոր պատվերով
Գետի մեջը գցեցին:
Բարի' եղիր հաշվարկել,
Կամ էլ՝ փորձիր գուշակել՝
Ուտող-խմող մեր Համոն
Ինչ գումար էր կտակել:



# ՄԽՈ ՔԵՌԻՍ

*Մի դեպք պատմեմ իմ անցյալից՝*
*Մանկությանս տարիներից,*
*Հուշերումս չի պահպանվել,*
*Քանզի վաղ է դա կատարվել:*
*Տարիներ են բազում անցել,*
*Քեռակինս չի մոռացել,*



Որ երբ պստիկ բալիկ էի,
Մեկ պարեկան հազիվ կայի,
Մայրս մարդին՝ վաղ գարնանը,
Թողել է ինձ քեռուս տանը:
Բաժանմանը չեմ դիմացել,
Արտասվել եմ, անվերջ լացել,
Միտ քեռիս ճար չի գտել,
Ծծակով է ձայնս կտրել,
Բերանս է զոռով խցկել,
Համոզելով՝ լաց չլինեմ,
Բայց հանել եմ ու դեն նետել,
Հեկեկալով մորս փնտրել:
Մորեղբայրս չի դիմացել,
Հնարանք է նա մտածել,
Որ ինչքան էլ փորձեր անեմ,
Բերանիցս այն չհանեմ,



Ծվծվոցով գլուխ տանեմ:
Պարահանդը հենց իմացա,
Քեռուս վրա շատ զայրացա,
Վիրավորված արտնեղեցի,
Հերո արտանց ծիծաղեցի:
Երբ նրա տեղն ինձ դրեցի,
Ապա շուտով համոզվեցի՝

Չար մտքով չէր բնավ արել,
Այլ պարզապես իմ միալար
Տզրզոցն էր զահլան տարել,
Ողջ գիշերը անքուն պահել:
Հիմա ասեք՝ գլխի ընկա՞ք՝
Հնարամիտ, հանաքասեր
Մխո քեռիս ինչ էր արել,
Եթե՝ այո, խնդրում եմ ձեզ՝
Նման օյին չհնարեք,
Մանկիկներին չչարչարե'ք:



# ՆՎԵՐՆԵՐԸ

Նոր տարին էր մոտենում,
Հայրս շատ էր ցանկանում
Մեզ այնպիսի նվեր տա,
Որ ամենքիս դուրն էլ գա:
Հարցմունք արեց նա հերթով՝
Արդյոք ինչ ենք երազում,
Ամանորի առիթով
Ինչ նվեր ենք մենք ուզում:
Ես խնդրեցի մեծ գնդակ,
Ավազ քույրս՝ սև մուշտակ,
Իսկ մեր կրտսեր եղբայրը՝
Փայտից շինված մի նավակ:
Տարեմուտի գիշերը
Տանտերկուսը երբ զարկեց,
Ձմեռ պապը այցելեց,



Ընծաներով զարմացրեց:

Ասեմ՝ մանկուց եմ սիրում

Թվեր գրել, գումարել,

Բազմապատկել ու հանել,

Բարդ հաշվարկներ կատարել:

Դրա համար ես վերցրի,

Նվերները զննեցի,

Պիտակների գները
Իրար կողքի գրեցի,
Այդ բոլորը միասին
Ութսուն հազար համրեցի:
Իմ գնդակը հույժ համեստ,
Անչափ ցածր գին ուներ,
Այ, քույրիկիս մուշտակը
Դրա ութ գինը արժեր,
Իսկ եղբորս նոր ընձան
Թանկ էր իմից յոթ անգամ:
Եթե դու էլ ջանք թափես,
Հաշվես կամ էլ գուշակես,
Ամեն մեկիս նվերի
Գինը հաստատ կպարզես:



# ԺԱՄԱՑՈՒՅՑԸ

Զառ արեգի ճաճանչները
Այգաբացին դեմքիս առա,
Քաղցրահունչիկ երազներից,
Անուշ քնից շուտ վեր թռա:
Դեռ չբացվող աչուկներս
Հորանջելով տրորեցի,



Պույրի նման խարխափելով՝
Զարթուցիչս որոնեցի:
Ալաքների անշարժ դիրքից
Տեղնուպեղը շվարեցի,
Մի վայրկյանում կայծակնաքար
Անկողնուցս վար ցատկեցի:
Աչք գցեցի խոհանոցի
Պատին գամված ժամացույցին՝
Մոռանալով, որ այն վաղուց
Դադարել էր աշխատելուց:
Հեռուսպացույց եւ միացրի,
Միգուցե նա՞ ժամը կասի,
Մև էկրանից գլխի ընկա՝
Տանս նույնիսկ հոսանք չկա:
Անկեղծ ասած՝ կասկածում եմ,
Թե մուծել եմ ամսավարձը,




Ինչքան միտքս փորփրեցի,

Չպարզեցի փանջող հարցը:

Ճիշտ է, օրը կիրակի էր,

Ուշ զարթնելը ինձ չէր հուզում,

Բայց դե հազար գործ ունեի,

Հյուրի էի դեռ սպասում:

-Տե՛ր իմ, այս ի՞նչ օրի հասա,

Մա՛րդ էլ այսքան ճախորդ լինի,
Քո հեգնա՛նքն է, թե՛ դաս է սա,
Ես սրա՛ն եմ ես արժանի:
Խոսք տվեցի այսուհետև
Աչալուրջ ու զգոն լինել,
Ամենօրյա նիստուկացիս,
Բարք-կենցաղիս միշտ հետևել:
Անփույթ վարքս Աստված ներեց,
Միտքս իսկույն լուսավորեց...
Զարթուցիչս շուտ լարեցի,
Մի մոտավոր ժամ դրեցի,
Սպորտային հագուստ հագա,
Թեթև քայլքով փողոց ելա:
Շտապեցի հրապարակ,
Ուր կար հսկա մի աշտարակ,
Նրա վրա վաղ ու վաղուց



Ամրացված էր մեծ ժամացույց:
Թվացույցին հենց նայեցի,
Պահը մտքում ամրագրեցի,
Չխորհեցի երկար-բարակ,
Վերադարձա ոչ շատ արագ,
Ինչ քայլերով այնտեղ հասա,
Նույն տեմպերով ես տուն դառա,

Սենյակ մտա արագորեն,
Ժամն ուղղեցի հապճեպորեն:
Մի'շտ եմ ասում, մի' զարմացիր,
Սլաքները երբ շտկեցի,
Այդ ամենը րոպեների
Ճշգրտությամբ կատարեցի:
Եթե գտնես դու ինքնուրույն
Պարզից էլ պարզ եղանակը,
Կհամոզվես, թե ինչ ուրույն
Ձևով գտա ժամանակը:



# ԽԱԾԸ

Ձմռան ցուրտը որ ընկավ,
Խաշն ամենքի միտքն եկավ,
Խոհանոցում ամեն տան
Խաշամաններ տեղ գտան:
Ավանդույթի համաձայն,
Հացթուխը և աղջիկը,





Մսագործն ու կնիկը
Որոշեցին խաշ դնել,
Սիրված ճաշը վայելել:
Վեց հափ լավաշ թխեցին,
Կերակուրը եփեցին
Ու դեռ օրը չբացված՝
Սուփրասեղան նստեցին:

Երեք մեծ թաս երբ լցրին,
Կաթսան լրիվ պարպեցին,
Ուտելիքը հավասար,
Արդարաբար բաշխեցին.
Ամեն մեկին բաժին ընկավ
Երկու լավաշ, մեկ աման խաշ:
Հայր ու աղջիկ, այր ու կին
Մի՜ կուշտ կերան, փռզեցին,
Բոլորն էլ գոհ մնացին,
Բայց դա ինչպե՞ս արեցին:



# ՀՆԱՐԱՄԻՏ ՀԱՅՐՍ

Մարտի ութին ընտանիքով՝
Ծնողներս, եղբայրս, ես,
Հյուր գնացինք նվերներով
Մոնա տատին մեր ժպտերես:
Հեղեղ տեղաց ճանապարհին,
Եվ երբ հասանք ջրի ափին,
Գետը գտանք փրփրակալած,
Իր եզերքից վերև ելած:
Կամրջակն էր քշել-տարել,
Միակ ճամփան տեղահանել,
Կանգնել էինք տարակուած՝
Չիմանալով, թե ինչ անել:
Թարսի նման մոտակայքում
Կենդանի շունչ չէր նշմարվում,



Տեղատարափ խենթ անձրևն էլ
Կարծես լռել չէր պատրաստվում:
Հայրս հիշեց Երեմ պապին,
Որն ապրում էր գյուղատակին,
Գնաց-դիմեց ծանոթին հին՝
Մեզ ձեռք մեկնի դժվար պահին:
Այնորը չորս դին նայեց,



Հոգոց հանեց ու երկքայեց.
-Հին մակույկս հազիվ օգնի,
Թե բոլորդ մեջը նստեք
Կամ մեծերով անցնել փորձեք,
Համոզված եմ՝ կխորտակվեք.
Սրանով լոկ երկու անձով՝
Մեկ երեխա ու մեկ մեծով,

Կամ էլ` միայն փոքրիկներով
Կարելի է անցնել հերթով:
-Ճամփերս ինչ, հնար չունենք,
Մի կերպ պիպի մորս պեսնենք,
Նրան գիպեմ, չի հավապա,
Համոզված եմ` կնեղանա:
-Ասենք` անցար դու այն ափը,
Ով կբերի իմ նավակը...
Բայց դե հայրս չվարանեց,
Մպամոլոր պեսք ընդունեց,
Քիչ անց դեմքին ժպիպ եկավ,
Քանզի անցման ձևը գպավ:
Հորդ անձրևը հենց խաղաղվեց,
Խոլ գեպակն էլ քիչ հանդարպվեց,
Հա'մ մեզ անցման ձևը հուշեց,
Հա'մ մակույկը այնպեղ պահեց,

Որ ետդարձին նույն հնարքով
Մեր ափ հասնենք ընտանիքով:
Այս խնդիրը ինքդ լուծիր,
Թե չստացվի, հորդ դիմիր,
Համոզված եմ՝ նա էլ անշուշտ
Իմ ծնողից ետ չի մնա,
«Ի՜նչ մեծ բան է»,- կասի նա քեզ,
Պատասխանը տեղում կտա:



# ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

**ԱՔԼՈՐԻ ՎԻՇՏԸ**–Աքաղաղը ձու չի ածում:

**ԼԱՅԿԱՆ ՄԿՆԵՐԸ**–Կար ընդամենը 33 մուկ:

**ՀԱՐՍԱՆՔԱՏՈՒՆ**–Հրավիրվել էր 72 մարդ:

**ԼԱՅԿԱՆ ՄԱՐԻՆ**–Կար 3 ճոճանակ և 4 ճոճվող երեխա:

**ԵՂԲԱՅՐՆԵՐԸ**–Մեծ եղբոր մոտ մնացել էր 10.000 դրամ, փոքրի մոտ՝ 14.000, իսկ շապիկն արժեր 8.000 դրամ:

**ԳԱՐԵՀԱՑ**–Տանել մկնիկին, թողնել պանրը, գալ, կապվին տանել, իսկ մկնիկին ետ բերել, թողնել հացատանը, գարին տուն տանել, թողնել կապվի մոտ, վերադառնալ և տանել մկնիկին:

**ՏԱՏՍ**–Տատիկը պահում էր 23 հավ ու 12 ճագար:

**ԿՈՆՖԵՏՆԵՐԸ**–Տատիկը թոռնիկներից մեկին կոնֆետը տուփով էր տվել:

**ՈՐՍՈՐԴՆԵՐԸ**–Փուռն էր դրվել ընդամենը 27 լոր: I եղբայրը կերել էր 9 լոր, II-ը՝ 6, III-ը՝ 4:

**ՀԱՄՈՅԻ ԿՏԱԿԸ**–Համոն կտակել էր 1750 դրամ:

**ՄԽՈ ՔԵՌԻՍ**–Քեռին ծծակին թել է կապել և երկու կողմից ամրացրել փոքրիկի ականջներից:

**ՆՎԵՐՆԵՐԸ**–Գնդակն արժեր 5.000 դրամ, մուշտակը՝ 40.000, իսկ նավակը՝ 35.000:

**ԺԱՄԱՑՈՒՅՑԸ**–Տրամաբանությունը պահանջում է

հարցի լուծման հետևյալ եղանակը: Դուրս գալուց առաջ նա գործի է գցել զարթուցիչը՝ մոտավոր ժամ նշելով: Հասնելով աշտարակի ժամացույցին՝ մտքում ամրագրել է ճիշտ ժամը և նույն արագությամբ վերադարձել: Եթե զարթուցիչը ցույց է տվել, որ տերը տնից դուրս է եկել ենթադրենք՝ 20 րոպե առաջ, նշանակում է՝ դրա կեսը վարնել է հրապարակ հասնելու, իսկ մյուս կեսը՝ ետդարձի վրա, քանի որ նա նույն արագությամբ է գնացել և վերադարձել: Աշտարակի ժամացույցի ցույց տված իրական ժամին հավելել է տուն հասնելու համար ծախսված 10 րոպեն և ճշգրտորեն ուղղել է ժամացույցը:

ԽԱՇԸ–Հացթուխի աղջիկը մսագործի կինն էր:

ՀՆԱՐԱՄԻՏ ՀԱՅՐՍ–Խնդրի լուծման ընթացքում պետք է պահպանել նմանատիպ համադրություն, որպեսզի նավակը ջրասույզ չլինի: Նախ՝ անցնում են երկու երեխաները, տղան ետ է բերում նավակը՝ մորն անցկացնելու համար: Նրան դիմացի ափը փեղափոխելով՝ վերադառնում է, և հայրն ու որդին միասին անցնում են: Մակույկը մնում է իրենց մոտ և նրանք նույն կերպ ետ են դառնում՝ վերադարձնելով այն իր փիրոջը:

Կ. Ս. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

ԷԼ. ՓՈՍՏ՝ karinemkrtumyan@rambler.ru

# ԽՆԴԻՐՆԵՐ ՏԱՏԻԿԻՍ ՄՆԴՈՒԿԻՑ

## II ՄԱՍ

ՄԻՋԻՆ ՏԱՐԻՔԻ
ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԽՄԲԱԳԻՐ
ԵՎ ՍՐԲԱԳՐԻՉ՝
ՆԱՐԻՆԵ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

ՄՈՒՏՔԱԳՐՈՂ ԵՎ
ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՁԵՎԱՎՈՐՈՂ՝
ԿԱՐԻՆԵ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ



ՏՊԱԳՐՎԱԾ Է «ՍՏԱՄՊԱ» ՍՊԸ-Ի ՏՊԱՐԱՆՈՒՄ,
Ք. ԵՐԵՎԱՆ, Հ/Ա Բ-1 ԹԱՂ., ՐԱՖՖՈՒ 99/1: ԷԼ.
ՓՈՍՏ՝ stampa@netsys.am ՉԱՓԸ՝ 84X60, 1/16:
ԹՈՒՂԹԸ՝ ՕՖՍԵԹ: ԾԱՎԱԼԸ՝ 3,85 ՏՊ. ՄԱՄՈՒԼ: